Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-1085-26.05.2025-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-295 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Կադաստրային գործի փաստաթղթերը թղթային տարբերակով ներկայացված կամ կազմված լինելու դեպքում պահվում են թղթային եւ էլեկտրոնային եղանակով վարվող կադաստրային գործերում, իսկ 2026 թվականի հունվարի 1-ից հետո ներկայացված կամ կազմված բոլոր փաստաթղթերը՝ միայն էլեկտրոնային եղանակով վարվող կադաստրային գործերում:»:

Հոդված 2. Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասում.

1) 7-րդ կետում «բանկը,» բառից հետո լրացնել «սույն օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով» բառերը,

2) լրացնել նոր 7.1)-ին կետով հետեւյալ բովանդակությամբ.

«7.1) ապահովում է էլեկտրոնային համակարգ դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի տեսաներածման, մուտքագրման, տեխնիկական միջոցներով դիմումատուի լուսանկարման եւ դրա մշակման գործընթացը.»:

Հոդված 3. Օրենքի 24-րդ հոդվածում.

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Պետական գրանցման վարույթի հարուցման հիմք է իրավունքի պետական գրանցում հայցող պետական գրանցման սուբյեկտի ներկայացրած դիմումը: Պետական գրանցման դիմումը ներկայացվում է անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային

համակարգի միջոցով՝ հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի, երբ դիմումը կարող է ներկայացվել նաեւ անշարժ գույքի պետական ռեգիստրի որեւէ սպասարկման գրասենյակ (անկախ գույքի գտնվելու վայրից):»,

2) 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3. Անշարժ գույքի պետական ռեգիստրի սպասարկման գրասենյակում դիմում մուտքագրելիս դիմողը պետք է ներկայանա անձը հաստատող փաստաթղթով եւ դիմումի հետ ներկայացնի՝

1) իրավունքի պետական գրանցման համար անհրաժեշտ իրավահաստատող փաստաթղթերը, իսկ սույն օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ նաեւ այդ հոդվածով սահմանված այլ փաստաթղթեր. ընդ որում՝ սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ եւ 2.1-ին մասերով սահմանված դեպքերում դիմումի հետ ներկայացվում են համապատասխան փաստաթղթերը նույնականացնող տվյալները.

2) «Պետական տուրքի մասին» օրենքով նախատեսված դեպքերում՝ այդ օրենքով սահմանված չափով պետական տուրքի վճարի մուծման անդորրագիրը եւ սույն օրենքի 71-րդ հոդվածով նախատեսված վճարի մուծման անդորրագիրը:»,

3) 8-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«8. Դիմողի ինքնությունը ստուգվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անձը հաստատող փաստաթղթի բնօրինակի կամ սահմանված կարգով հաստատված պատճենի հիման վրա եւ համապատասխան տեխնիկական միջոցներով իրականացված լուսանկարի հիման վրա հավաստվում է նրա ներկայությունը: Ներկայացված դիմումը եւ կից փաստաթղթերը տեսաներածվում եւ մուտքագրվում են էլեկտրոնային համակարգ: Դիմողը համապատասխան էլեկտրոնային ստորագրության սարքի միջոցով իր ստորագրությամբ հավաստում է ներկայացված փաստաթղթերի եւ տեսաներածված փաստաթղթերի համապատասխանությունը, որի արդյունքում վերջիններս ձեռք են բերում հավասար իրավաբանական ուժ ներկայացված փաստաթղթերի հետ, այնուհետեւ դիմողին են վերադարձվում վերջինիս կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը: Անշարժ գույքի պետական ռեգիստր ներկայացված փաստաթղթերի եւ դրանց մյուս օրինակների միջեւ հակասության դեպքում նախապատվությունը տրվում է անշարժ գույքի պետական ռեգիստր ներկայացված փաստաթղթերին: Դիմումի մուտքագրումից հետո դիմողին տրամադրվում է համակարգի կողմից ձեւավորված արագ արձագանքման (QR) կոդ պարունակող դիմումի ընդունման վերաբերյալ քաղվածք, որում պարտադիր նշվում են դիմումի մուտքագրման օրը, ժամը, որպեն, մուտքի համարը, դիմողի տվյալները՝ անուն, ազգանուն, դիմումով ներկայացվող պահանջը, դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ցանկը, ինչպես նաեւ անշարժ գույքի պետական ռեգիստրի ղեկավարի կողմից դիմումի ընդունման վերաբերյալ քաղվածքի հաստատված ձեւաթղթով սահմանված այլ անհրաժեշտ տվյալներ:»,

4) լրացնել նոր 8.1.-ին մասով հետեւյալ բովանդակությամբ.

«8.1. Էլեկտրոնային համակարգ դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի տեսաներածման, մուտքագրման, տեխնիկական միջոցներով դիմումատուի լուսանկարման եւ դրա մշակման կարգը, ինչպես նաեւ դիմողին տրամադրվող արագ արձագանքման (QR) կոդ պարունակող քաղվածքի ձեւաթուղթը հաստատում է անշարժ գույքի պետական ռեգիստրի ղեկավարը:»,

5) 9-րդ մասում «ներկայացված» բառից հետո լրացնել «եւ տեսաներածված» բառերը:

Հոդված 4.

1. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածից բխող իրավական ակտն ընդունվում է մինչեւ 2026 թվականի հունվարի 1-ը:

Կ-1085-26.05.2025-ՏՀ-011/1

Լրամշակված նախագիծ

~~Առաջին~~ Երկրորդ ընթերցում

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-295 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Կադաստրային գործի փաստաթղթերը թղթային տարբերակով ներկայացված կամ կազմված լինելու դեպքում պահվում են թղթային եւ էլեկտրոնային եղանակով վարվող կադաստրային գործերում, իսկ 2026 թվականի հունվարի 1-ից հետո ~~ներկայացված եւ~~ ներկայացված կամ կազմված բոլոր փաստաթղթերը՝ միայն էլեկտրոնային եղանակով վարվող կադաստրային գործերում:»:

Հոդված 2. Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասում.

1) 7-րդ կետում «բանկը,» բառից հետո լրացնել «սույն օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով» բառերը,

2) լրացնել նոր 7.1)-ին կետով հետեւյալ բովանդակությամբ.

«7.1) ապահովում է ~~պետական գրանցման~~ էլեկտրոնային համակարգ դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի տեսաներածման, մուտքագրման, տեխնիկական միջոցներով դիմումատուի լուսանկարման եւ դրա մշակման գործընթացը.»:

Հոդված 3. Օրենքի 24-րդ հոդվածում.

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Պետական գրանցման վարույթի հարուցման հիմք է իրավունքի պետական գրանցում հայցող պետական գրանցման սուբյեկտի ներկայացրած դիմումը: Պետական գրանցման դիմումը ներկայացվում է անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային համակարգի միջոցով՝ հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի, երբ դիմումը կարող է ներկայացվել նաեւ անշարժ գույքի պետական ռեգիստրի որեւէ սպասարկման գրասենյակ (անկախ գույքի գտնվելու վայրից):»,

2) 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3. Անշարժ գույքի պետական ռեգիստրի սպասարկման գրասենյակում դիմում մուտքագրելիս դիմողը պետք է ներկայանա անձը հաստատող փաստաթղթով եւ դիմումի հետ ներկայացնի՝

1) իրավունքի պետական գրանցման համար անհրաժեշտ իրավահաստատող փաստաթղթերը, իսկ սույն օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ նաեւ այդ հոդվածով սահմանված այլ փաստաթղթեր. ընդ որում՝ սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ եւ 2.1-ին մասերով սահմանված դեպքերում դիմումի հետ ներկայացվում են համապատասխան փաստաթղթերը նույնականացնող տվյալները.

2) «Պետական տուրքի մասին» օրենքով նախատեսված դեպքերում՝ այդ օրենքով սահմանված չափով պետական տուրքի վճարի մուծման անդորրագիրը եւ սույն օրենքի 71-րդ հոդվածով նախատեսված վճարի մուծման անդորրագիրը:»,

3) 8-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«8. Դիմողի ինքնությունը ստուգվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անձը հաստատող փաստաթղթի բնօրինակի կամ սահմանված կարգով հաստատված պատճենի հիման վրա եւ համապատասխան տեխնիկական միջոցներով իրականացված լուսանկարի հիման վրա հավաստվում է նրա ներկայությունը: Ներկայացված դիմումը եւ կից փաստաթղթերը տեսաներածվում եւ մուտքագրվում են ~~պետական գրանցման~~ էլեկտրոնային համակարգ: Դիմողը համապատասխան էլեկտրոնային ստորագրության սարքի միջոցով իր ստորագրությամբ հավաստում է ներկայացված փաստաթղթերի եւ տեսաներածված փաստաթղթերի համապատասխանությունը, որի արդյունքում վերջիններս ձեռք են բերում հավասար իրավաբանական ուժ ներկայացված փաստաթղթերի հետ, այնուհետեւ դիմողին են վերադարձվում վերջինիս կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը: Անշարժ գույքի պետական ռեգիստր ներկայացված փաստաթղթերի եւ դրանց մյուս օրինակների միջեւ հակասության դեպքում նախապատվությունը տրվում է անշարժ գույքի պետական ռեգիստր ներկայացված փաստաթղթերին: Դիմումի մուտքագրումից հետո դիմողին տրամադրվում է համակարգի կողմից ձեւավորված ~~շտրիխ~~ արագ արձագանքման (QR) կոդ պարունակող դիմումի ընդունման վերաբերյալ քաղվածք, որում պարտադիր նշվում են դիմումի մուտքագրման օրը, ժամը, որպեն, մուտքի համարը, դիմողի տվյալները՝ անուն, ազգանուն, դիմումով ներկայացվող պահանջը ~~եւ~~.

դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ցանկը, ինչպես նաեւ անշարժ գույքի պետական ռեգիստրի ղեկավարի կողմից դիմումի ընդունման վերաբերյալ քաղվածքի հաստատված ձեւաթղթով սահմանված այլ անհրաժեշտ տվյալներ:»,

4) լրացնել նոր 8.1.-ին մասով հետեւյալ բովանդակությամբ.

«8.1. ~~Պետական գրանցման էլեկտրոնային~~ Էլեկտրոնային համակարգ դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի տեսաներածման, մուտքագրման, տեխնիկական միջոցներով դիմումատուի լուսանկարման եւ դրա մշակման կարգը, ինչպես նաեւ դիմողին տրամադրվող ~~շտրիխ~~ արագ արձագանքման (QR) կոդ պարունակող քաղվածքի ձեւաթուղթը հաստատում է անշարժ գույքի պետական ռեգիստրի ղեկավարը:»,

5) 9-րդ մասում «ներկայացված» բառից հետո լրացնել «եւ տեսաներածված» բառերը:

Հոդված 4.

1. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածից բխող իրավական ակտն ընդունվում է մինչեւ 2026 թվականի հունվարի 1-ը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1085-26.05.2025-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
««ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1085-26.05.2025-ՏՀ-011/0)					
1.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում «ներկայված եւ» բառերը փոխարինել «ներկայացված կամ» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը, ինչպես նաև առկա վրիպակը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ հոդվածի 3-րդ ու 4-րդ մասեր	Խմբագրական աշխատանքներով և բավարար հստակություն ապահովելու նպատակով պայմանավորված՝ առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ հոդվածի 3-րդ ու 4-րդ մասերում «պետական գրանցման էլեկտրոնային համակարգ» բառերը փոխարինել «էլեկտրոնային համակարգ» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մաս	Հաշվի առնելով, որ Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 24-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 3-րդ մասի բովանդակությունը կիսատ է՝ առաջարկում ենք նշված մասում լրացնել նաև այդ նույն մասի գործող խմբագրությամբ առկա կետերի բովանդակությունը:	Ընդունվել է:	Ընդունվել է:

4.	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասեր	Խմբագրական աշխատանքներով պայմանավորված՝ առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում «շտրիխ» բառը փոխարինել «արագ արձագանքման (QR)» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
5.	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ մաս	Խմբագրական աշխատանքներով և բավարար հստակություն ապահովելու նպատակով պայմանավորված՝ առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ մասում «պարունակող» բառից հետո լրացնել «դիմումի ընդունման վերաբերյալ» բառերը, «որում» բառից հետո լրացնել «պարտադիր» բառը, «պահանջը» բառից հետո առկա «եւ» տառը փոխարինել «,» կետադրական նշանով, իսկ «ցանկը» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ անշարժ գույքի պետական ռեգիստրի ղեկավարի կողմից դիմումի ընդունման վերաբերյալ քաղվածքի հաստատված ձեւաթղթով սահմանված այլ անհրաժեշտ տվյալներ:» բառերը: Միևնույն ժամանակ, առաջնորդվելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի պահանջներով՝ առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ մասում «դիմողի տվյալները» ձևակերպումից հետո լրացնել «՝ անուն, ազգանուն» բառերը՝ ապահովելով քաղվածքում ներառվող և մշակման ենթակա անձնական տվյալների հստակեցումը:	Ընդունվել է:	Ընդունվել է: